ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՃԱՇԸ Ի ՊԱՏԻՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

—

Թիֆլիսի քաղաքային Դուման վճռեց պատուել Վ-որդ հնագիտական ժողովի անդամներին և սեպտեմբերի 18-ին նրանց ճաշի հրաւիրեց Թիֆլիսի կլուբի ամարային բնակարանի մէջ:

Թագաւոր Կայսրի և Կովկասեան փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի կենացը առաջարկելուց յետոյ քաղաքագլուխ պ. Մատինեանը բարձրացրեց բաժակը՝ի պատիւ Վ հնագիտական ժողովի և արտասանեց մոտաւորապէս հետևեալ ճառը:

„Պարոններ, իմ գործս չէ գնահատել ձեր գործունէութեան պտուղները մեր քաղաքի պատերի մէջ, որի ներկայացուցիչները պարծենում են նրան գիտական ժողովի տեղ ընտրելու համար: Իմ ձայնը բաւական հմուտ չէ կարող լինել այդպիսի գիտական գնահատութեան համար: Բայց որովհետև գիտութեան վերջնական նպատակն է զարգացնել հասարակութիւնը, հետևապէս բարոյական հասարակական կազմակերպութիւնը և կենցաղապարութիւնը, ուրեմն մենք գործնական կեանքի ներկայացուցիչներս չենք կարող չը համակրել գիտութեան առաջադիմութեանը: Ընդունակ լինելով գնահատել գլխաւորապէս ձեր գործունէութեան այդ կողմը, մենք ողջունում ենք ձեզ իբրև լաւ ապագայ պատրաստողներին: Բայց թոյլ տուէք ինձ, դատարկելով այս բաժակը ձեր աշխատանքների աջողութեան համար, խնդրել, որ ինձ հետ միասին ցանկանաք մեր քաղաքին՝ ոչ թէ ժամանակ առժամանակ տեսնել իր պատերի մէջ գիտութեան մշակներին, այլ որ նա կենտրոն դառնայ մարգկային այդ ամենաբարձր գործունէութեան, որից, ինչպէս մի մեքենայից լուսաւորվէին մեր երկրի բոլոր մութ անկիւնները, որ այդքան տանջվել է տգիտութեան խաւարի մէջ: Ես հաւատացած եմ, որ Թիֆլիսի ամբողջ ազգաբնակութեան հետ միասին իմ յայտնած ցանկութիւնը Թիֆլիսի համալսարան հիմնելու մասին ամենալաւ ողջոյն է, որով ես կարող եմ դիմել այստեղ հաւաքված գիտութեան ներկայացուցիչներին: Ցանկանանք ուրեմն, որ շուտ հասնի այդ բաղձալի օրը, երբ դուք մեր քաղաքում տերերը կը լինէք և ոչ թէ հիւրեր:“

Այդ ճառը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ և ծափահարութիւններով ծածկվեցաւ:

Այդ ճառին պատասխանեց կոմս Ուվարովն՝ Շնորհակալութիւն յայտնելով Թիֆլիսին հնագէտների լաւ ընդունելութեան համար, կոմսը նկատեց, որ հնագիտական ժողովը առանձին համակրութեամբ ընդունվեցաւ Թիֆլիսի ինտելլիգենցիայի կողմից: կոմս Ուվարով մեծ համակրութեամբ վերաբերվեցաւ Թիֆլիսի ազգաբնակութեան ձգտմանը իր քաղաքի մէջ համալսարան ունենալու մասին:

Պ. Վլադիմիրովի և Կովկասեան վարչութեան գլխաւոր գործիչների կենացները առաջարկելուց յետոյ մի բաւական երկար ճառ արտասանեց Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆէսոր Դ. Ա. Խվոլսոն: Բացառապէս հայ ինտելլիգենցիային ուղղած այդ ճառը նուիրված էր ազգայնութեան պահպանելու և ազգային գրականութիւնը մշակելու հարցին, պայմանաւորելով, որ այդ գործը չը խանգարէր ռուսաց հառաջադիմութեան հրատակ Կովկասը բնակեցնող զանազան ազգութիւնների միութեանը:

Այնուհետև բուն պարլամենտական պերճախօսութեամբ մի ճառ արտասանեց պրոֆէսոր Վլադիմիրով, որով յարգելի գիտնականը շատ լաւ կարծիք յայտնեց տեղական ինտելլիգենցիայի մասին և նկատեց, որ քաղաքակրթութիւնը Կովկասի մէջ մեծ առաջադիմութիւն է գործել: Միանալով քաղաքագլխի ցանկութեան հետ, որ Թիֆլիսը երկրի մէջ քաղաքակրթութիւն տարածող կենտրոն դառնայ և որ նրա մէջ համալսարան հիմնվի, որ մեծ զարկ կը տայ ազգաբնակութեան զարգացմանը և նրա մտաւոր և բարոյական առաջադիմութեանը, Վլադիմիրով թղթակցութիւն խնդրեց ռուսաց քաղաքակրթութեան ամենաաւագ ներկայացուցիչ Ն. Ի. Կոստոմարովի կենացը առաջարկել:

Այնուհետև պրոֆէսոր Ցվետաևի հանմատեց այժմեան ժողովը 1875 թ. Խարկովի մէջ եղած ժողովի հետ, որին նա մասնակցել է, և այն եզրակացութեան է հասել, որ նա չէ կարող համեմատել այս ժողովի հետ ոչ առաջարկված հարցերի քանակութեամբ և ոչ ազգաբնակութեան մասնակցութեամբ և համակրութեամբ: Ճաշը վերջացաւ ժամի 6-ին, բայց հնագիտական ժողովի անդամներից շատերը բաւական երկար ժամանակ մնացին կլուբում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻ

—

Կ. Պոլիս, 9 սեպտեմբեր

Բամազանը ու պայրամը վերջացան. դեսպանները վերադարձեր են Կ. Պոլիս, հետևաբար Հայկական հարցի համար աշխատելու դժուարութիւն չը կայ: Դեսպանները քանի մը անգամ ժողովեցան և որոշեցին առանձին առանձին Բ. Դուռը երթալ և ամենքը մէկ խօսք ընել, այսինքն պահանջել Բ. Դռնէն որ իր պատասխանը տայ այն ծանուցագրին, զոր դեսպանք անցեալ հոկտեմբեր 3-ի մառուցին Բ. Դրան: Անշուշտ կը յիշէք որ անցեալ տարի Բ. Դուռը ծրագիր մը ներկայացուցած էր ընդհանուր բարեկարգութեանց համար. դեսպանները այդ ծրագիրը չատ անկատար գտան և ամենեին չը համապատասխանող 61-րդ յօդուածի ոգւոյն և խիստ կծու լեզուով մը յայտնեցին իրենց կարծիքները: Հիմա ասոր պատասխանն է, որ կուգէն. Բ. Դուռը գլուխ պիտի տայ այդ պատասխանը: Քանի մը օրէ ի վեր թիւրք թերթերը նորէն սաստիկ կատղեր են մեզ դէմ. նախատանք, ծաղր, սխալ տեղեկութիւններ ոչինչ պակաս չէ. մեր թերթերը, ինչպէս յայտնի է, թէ որ ուզած պատասխանին տանկը ընդունէն կառավարութեան հրամանաւ. Ինչպէս ուրիշ նամակաւ ալ ըսած ենք այս ձեռ 61-րդ յօդուածին գործադրութեան համար բան մը չը կրնար ըլլալ, խորհրդակցութեամբք, ծրագիրներ պատրաստելով կը անցնի, կը սպասենք գարնան.

Կիլիկիոյ կաթողիկոսի խնդիրը վերջին օրերս նշաններ ցոյց կուտայ գոհացուցիչ կերպով վերջանալու. Պարիսաբը և կաթողիկոսը կարծր տեսակցութիւն մը կունենան Ազգ. վարչութեան ատենապետի ներկայութեանը. Պատրիարքը զօրաւոր փաստերով ցոյց կուտայ կաթողիկոսին թէ ինքն չը պիտի կարնայ յաջողիլ, թէ ազգը ամեն զոհողութիւն պիտի ընէ Թիւրքիոյ հայոց միութեան կանը չը խզելու և թէ կաթողիկոսը չը գայ յուղղութիւն, գնա որ եէ կերպով հրաժարեցնելու հարկը անհրաժեշտ է: Միւս կողմէ Ազգ. դիոյ դեսպատատունը թէ պատրիարքարանի բանակցութեանց ընդհրն. և թէ քաղաքագլխական ուրիշ նկատումներով, մասնաւորապէս դեսպանի մը ազդեցութեամբը, Մկրտիչ կաթողիկոսի խորհրդոցը գործադրութեան պաշտպան ըլլալ ետ կը կենայ:—Խնդիրը այս վիճակին մէջ ըլլալով, Կիլիկիոյ կաթողիկոսը խոնարհութիւն համարած է, լրագիրներէն ոմանց ըսածին նայելով, իր դիտաւորութիւններէն ետ կենալ և կառավարութիւն տեղափոխվելու դէպի Նոր, չը վարակված տեղեր և դէպի որ կոյսը:

27) Ո՞ր արտերում են նոքա աւելի բազմութեամբ լինում և վնասում՝ սարօտ թէ դաշտային տեղերում.

28) Գարնանացանին տուած վնասը գոնէ այս վերջի 6 տարվայ ընթացքում հաշվելով մանեթներ.

29) Աշնանացանին տուած վնասը գոնէ այս վերջի 6 տարվայ ընթացքում, հաշուելով մանեթներ.

30) Արդեօք վնասում է նա և կորեկին.

31) Ո՞ր արակված տեղը սարօտ թէ դաշտային է.

32) Ինչ սերմաշրջան է ընդունված (сѣмообороть) այսինքն մի դաշտում ամենայն տարի մի և նոյն բոյսն է ցանվում, թէ տարեց տարի այդ բոյսը փոխվում է ուրիշների և ինչպէս.

33) Գիւղացիք և հողաւարերը արդեօք մի որ և է միջոց գործ են դնում բզեզը ոչնչացնելու համար և ինչպէս.

34) Տեղական վարչութիւնը արդեօք գիտէ այդ բզեզի մասին թէ ոչ.

Այստեղ կան այնպիսի հարցեր, որոնց պատասխանները պիտի հաւաքվին առանձին զանազան գիւղացիներից. այս կատեգորիայի պատկանում են օրինակ 1, 5, 6, 8, 9, 12, 14, 15, 21, 22, 23, 28, 29, 30, 31, 32 և 33. իսկ մնացեալ հարցերը կարող են վճռվիլ և առանց հարց ու փորցի. Ի հարկէ աւելի լաւ կը լինէր, եթէ բոլոր պրոգրամմային կարելի լինէր առանձին պատասխանել զանազան վարակված տեղերի վերաբերմամբ. Վերջապէս կը խնդրեմ առանձին ուշ դարձնել հետեւեալ հարցերի վրա՝ 9. 10, 11, 13, 15, 16, 17, 21, 22, 24, 27, 28, 29 և 32. գլխաւորապէս այս վերջինների պատասխաններից կիմացվի, համարեա ուղիղ Anisoplia austriaca կովկասում տարածվելու մասին.

Ցանկացողներին կը խնդրեմ շտապել ինձ պատասխանելու այս պրոգրամմայի համեմատ հետեւեալ հասցէով. Москва. Студенту Петровской Академіи Григорію Юзбашеву.

Գ. Իւզբաշեանց

$2^1/_2$ շաբաթ. այս պտուտակներից (куколка) վերջապէս դուրս է գալիս հացի բզեզը, որը ապրում է $4^1/_2$ շաբաթ. Ուրեմն բզեզի բոլոր կեանքը չարունակվում է 2 տարի և $1^1/_2$ ամիս.

Յօդուածիս նպատակը ինձ թոյլ չէ տալիս մանրամասնօրէն խօսել ոչ բզեզի կենսագրութեան և ոչ նրա բազմանալու պատճառների վրա և վերջապէս ոչ էլ նրան ոչնչացնելու մասին: Միայն այս կասեմ, որ նրան անհետացնելու համար ի հարկէ ամենաէնշը և ամենալաւը այն է, որ վարակված տեղերում մի քանի տարի վարուցանք չանվի—բզեզին առանց կերակրի թողնելու: Բայց գիւղացին չը վարելով իր տարփ, կը զրկի իր ընտանիքը ևս կերակրից, բզեզի հետ միասին գուցէ և իր ընտանիքը կը կոտորէ. Մինչև այժմ առաջարկված միջոցների հիմքը այն է, որ գիւղացին չարունակէ իր վարուցանքը և մի և նոյն ժամանակ երբէք չը վախենայ բզեզի անգին թիւից, որը եթէ վրա էլ հանենալու լինի, այդ միջոցները այնպիսի պայմաններ են ստեղծում, որոնք հողագործին միջոց են տալիս բզեզին քչել մի սահմանափակած տեղ, այն է զարնանացան արտերը: Դրանից յետ երբ մենք գիտենք թէ որտեղ է և ինչքան տեղ է բռնած դաշտում բզեզը, չատ հեշտ է նրան ոչնչացնելը. բայց թէ ինչ կերպ պիտի ստեղծվեն այդ պայմանները, դա յետոյ կիմանանք.

Այս միջոցները կատարելու և գործին լաւ ընթացք տալու համար, բաւական չէ դեռ ևս, որ, օրինակ, տասը հողագործից մէկը կամ երկուսը այնտանեն սրա համար, այլ հարկաւոր է ա) որ բոլոր գիւղացիները և կալուածատէրերը և մենք անգամ կառավարութիւնը ձեռք ձեռքի տան և այդպիսով ընդհանուր ոյժը վերջապէս կը կարողանայ դուրս քշել դաշտերից հացի բզեզին. այն ժամանակ հարաբաւոր պուդ հասիկները կը մնանեն գիւղացու չտեսնվանը, որ գիւղական դասի հարատութեան գլխաւոր աղբիւրն է. և բ) առաջարկվող միջոցները իրագործելու համար գիւղատնտեսները պէտք է մտ ծանօթ լինեն իրանց թշնամու—հացի բզեզի—հետ: Մեր գիւղացիները այնպէս տգիտութեան մէջ են, որ այսպիսի դիպուածները Աստուծու պատիժ են անուանում, ապա ուրեմն և անկարելի է նրանց երևում Աստուծու այսպիսի հալածանքներից փախչել. Բայց մենք չը մոռանանք, որ նրանք արդէն լաւ հակացել են, որ անցեալ տարիների թշուառութիւնից—մորեխից—պատժվելը ոչ թէ Աստուծուց էր կախված, այլ նա մի ծուլութեան և տգիտութեան պտուղ էր: Այժմ գիտէ գիւղացին թէ ինչ պիտի անէ մորեխի դէմ, որը մի ժամանակ անգին վնասներ է պատճառած նորան: Այժմ ժամանակը հասնում է, որ պիտի գիւղացին հիմկուց պատրաստվի հացի բզեզի հետ կռուելու համար, թէ չէ մեծ վնասներ տալուց յետոյ էլ ուշ կը լինի. իմ կարծիքով չարիքի առաջն առնելու համար միջոցները սրանք են: Պէտք է դասախօսութիւններ կարդացվեն հացի բզեզի մասին. պէտք է բրոշիւրաներ տարածվեն ժողովրդի մէջ. պէտք է զանազան գիւղեր ուղարկվի հացի բզեզի պատկերը քանի մի խորհուրդներով. Այսպիսի մի բրոշիւր ես արդէն սկսել եմ գրել. բայց այժմանից հարկաւոր է իմանալ Anisoplia austriaca Կովկասում զանազան տեղեր վնասելու և չը լինելու մասին: Այս նպատակով առաջարկում ենք մի պրոգրամմա: Հաւատամ եմ որ այսպիսի մի նշանաւոր հարց. որ մեծ նշանակութիւն ունի գիւղացու ապագայ բարօրութեան համար, առանց ուշադրութեան չի մնայ բոլոր այն անձինքներից, որոնք կարող են նպաստել այս հարցի վճռելուն Կովկասի վերաբերմամբ, պատասխանելով այս պրոգրամմային.

1) Ի՞նչ գիւղերում է երևում այժմ այս բզեզը և ինչ անուններ է կրում նա զանազան տեղեր (գիւղի անուններ, նահանգ և գաւառ).

2) Ո՞ր տարվանից է սկսել նա երևալ.

3) Ո՞ր տարիներում նոքա աւելի մեծ բազմութեամբ են եղել.

4) Արդեօք մինչև 1868 թիւը նոքա եղել են և զգալի վնասներ տուած են թէ ոչ.

5) Հացաբոյսերի (ցորեն և գարի) հետ միասին էլ ինչ ուրիշ գիւղատնտեսական բոյսեր են ցանվում.

6) Ինչքան տեղ են բռնում հացաբոյսերը (ցորենը և գարին) և ինչքան միւս գիւղատնտեսական բոյսերը. դրանց թւում և կորեկը.

7) Ո՞րն է աւելի տեղ բռնում՝ աշնանացանը թէ գարնանացանը.

8) Գարնան և աշունքի որ ժամանակում են ցանում ցորենը և գարին (ամիս և մասաւորապէս թիւը).

9) Ե՞րբ է սկսում արտը հասկը կալել.

10) Խոտը մինչև հասկը կալելն է հնձվում, թէ դրանից յետոյ.

11) Ե՞րբ են հացաբոյսերը (ցորենը և գարին) հասունանում, և երբ են հնձվում.

12) Ի՞նչ խորութեամբ են հերկում դաշտը.

13) Երբ են սկսում առաջին անգամ հերկել աշունքին (ամիս և թիւ).

14) Ցանելուց առաջ քանի անգամ են հերկում դաշտը.

15) Երբ է սկսում երևալ բզեզը (ամիս և թիւ).

16) Բզեզի արտաքին նկարագրութիւնը (մեծութիւնը, մարմնի զանազան մասերի գոյնը և այլն և այլն.)

17) Ո՞րտեղ է սկսում երևալ բզեզը առաջ—հացերի վրա թէ մարգագետներում.

18) Ի՞նչպէս են տարածվում արտերում՝ հաւասարապէս թէ ոչ, եթէ ոչ, որտեղ է աւելի՝ արտերի մէջ տեղում, թէ ափերում.

19) Օրվայ որ ժամանակն է երևում բզեզը հասկի վրա.

20) Օրվայ մինչև որ ժամանակն է մնում հասկի վրա.

21) Մասաւորապէս որ ամսին և որ թիւն է անհետանում բզեզը.

22) Բոյսի և հասկի որ մասին է վնասում և ինչպէս. արդեօք հասկն է կտրում, թէ հասած հատիկներն է ուտում, կամ առանց նոքա վնասելու վայրէ ձգում, կամ միայն հասկի ծաղիկներն է ուտում.

23) Մասաւորապէս մէկ հասկի վրա քանի բզեզ է լինում.

24) Արդեօք նոքա ամենայն տարի երևում են թէ ոչ, եթէ ոչ քանի տարէնը մէկ են երևում մի և նոյն տեղում.

25) Տարէց տարի այդ բզեզի թիւը պակասում է թէ աւելանում.

26) Նոցա մէջ նկատվում է արդեօք ցանկութիւն տեղափոխվելու դէպի Նոր, չը վարակված տեղեր և դէպի որ կոյսը.

27) Ո՞ր արտերում են նոքա աւելի բազմութեամբ լինում և վնասում՝ սարօտ թէ դաշտային տեղերում.

28) Գարնանացանին տուած վնասը գոնէ այս վերջի 6 տարվայ ընթացքում հաշվելով մանեթներ.

29) Աշնանացանին տուած վնասը գոնէ այս վերջի 6 տարվայ ընթացքում, հաշուելով մանեթներ.

30) Արդեօք վնասում է նա և կորեկին.

31) Ո՞ր արակված տեղը սարօտ թէ դաշտային է.

32) Ինչ սերմաշրջան է ընդունված (сѣмообороть) այսինքն մի դաշտում ամենայն տարի մի և նոյն բոյսն է ցանվում, թէ տարեց տարի այդ բոյսը փոխվում է ուրիշների և ինչպէս.

33) Գիւղացիք և հողաւարերը արդեօք մի որ և է միջոց գործ են դնում բզեզը ոչնչացնելու համար և ինչպէս.

34) Տեղական վարչութիւնը արդեօք գիտէ այդ բզեզի մասին թէ ոչ.

Այստեղ կան այնպիսի հարցեր, որոնց պատասխանները պիտի հաւաքվին առանձին զանազան գիւղացիներից. այս կատեգորիայի պատկանում են օրինակ 1, 5, 6, 8, 9, 12, 14, 15, 21, 22, 23, 28, 29, 30, 31, 32 և 33. իսկ մնացեալ հարցերը կարող են վճռվիլ և առանց հարց ու փորցի. Ի հարկէ աւելի լաւ կը լինէր, եթէ բոլոր պրոգրամմային կարելի լինէր առանձին պատասխանել զանազան վարակված տեղերի վերաբերմամբ. Վերջապէս կը խնդրեմ առանձին ուշ դարձնել հետեւեալ հարցերի վրա՝ 9. 10, 11, 13, 15, 16, 17, 21, 22, 24, 27, 28, 29 և 32. գլխաւորապէս այս վերջինների պատասխաններից կիմացվի, համարեա ուղիղ Anisoplia austriaca կովկասում տարածվելու մասին.

Ցանկացողներին կը խնդրեմ շտապել ինձ պատասխանելու այս պրոգրամմայի համեմատ հետեւեալ հասցէով. Москва. Студенту Петровской Академіи Григорію Юзбашеву.

Գ. Իւզբաշեանց

թիւնէն խնդրել որ իր Պէրաթը պատրիարքարանի ուղղին պէս տայ։ Երանի թէ սասկ ըլլար. թէպէտ մենք այդ խորամանկ եկեղեցականէն միշտ կասկածելիր ունինք։

Ազատունի Եղնիկ եպիսկոպոսը, որ իբր յեղափոխական դատապարտուած է մշանջնաւոր բռնի աշխատութեանց, անպարտ կարձակուի վերաքննիչ դատարանէն։

Պահ մը թողունք ազգային քաղաքական հարցերը և քիչ մ'ալ զբաղինք կրթական խնդրով, զի այս խնդիրը սկսած է նոր կարեորութիւն մը ստանալ մեր մէջ։—Այս տարի արտաքոյ կարգի չքեղ կերպով կատարեցան դպրոցներու պարգեւաշնչութեանց հանդէսները։ Յուլիսի և օգոստոսի մէջ, կիրակի տաք ուրեակով մը, հազարաւոր հայեր կը դիմէին դպրոցները ծափահարելու հազարաւոր հայ պատանիներ, ազգութեան ապագայ յոյսերը։ Այդ խեղճ պատանիները ուրախ և զուարթ են. ամէն ինչ իրենց համար վարդագոյն է, զի չեն գիտեր թէ ինչ տեսակ դժբաղդութիւններ իրենց պատուած են, երբ անգամ մը թողուն դպրոցի գրասեղանները։ Քանի տարի է որ նոր զարկ մը արուած է կ. Պոլսոյ հայոց կրթութեանը, և սակայն քանի տարի է կ. Պոլսոյ հայոց վիճակը օրըստօրէ կը վատթարանայ, մասամբ կառավարութեան սխալներովը, մասամբ, և մեծ մասամբ, մեր պակասութեամբը, որ չենք գիտեր թէ մարդ ամէն դժուար պարագայի որշափ որ կարելի է դիմանալու պատրաստ պէտք է ըլլայ, և ազգայները ըստ այնմ պէտք է կրթուին։ Քանի տարիէ ի վեր է ուր են անոնք. քանիներ են որ ընտանիք կազմած ըլլան, քիչ չատ բարեկեցիկ վիճակ մը ունեցած ըլլան, և անով ալ ազգին ծառայեն, զի վիճակը ազէկ չեղող մարդ մը ինչպէս կրնայ ազգին համար աշխատել։ Քանիներ տեսանք, որք ունենալով իրենց ձեռքը Վերթիր մը, Ռափայէլ մը կընդմէնն անոնց մէջ և սակայն զժբաղդ են, զի անոթի են։— Պ. Նիկողոսեան երբ գործնական ուղղութեան խնդիրը յուզեց, մասը վերջին վրայ դրաւ։ Մեր դպրոցներուն մէջ ոչ ոք կը մտածէ թէ երբ տղայ մը ելլէ, ինչ պիտի ընէ։ Ամէն ատիճանի, ամէն դասի հայեր կուգան որ իրենց տղայները դպրոցը քանի մը լեզու սորվին։ Հարցուր հօր մը, ինչ պիտի ընես տղադ։ Աստուած ողորմած է, մէկուն քով կուտամ, գրագիր կըլլայ։ Դպրոցիներ պատրաստել, ահա ամենուն երազը։ Եւ սակայն ցոյց տուած ենք թէ այս իսկ ընելու անկարող ենք։ Քանի տղայք կան որ դպրոցէն երբ կելլեն, քիչ չատ լաւ ֆրանսերէն մը գրեն, կամ կանոնաւոր կերպով տետրակ բռնելու սկզբունքները գիտցած ըլլան։— Չենք ըսեր որ դպրոցը արուեստանոցի դառնայ, սակայն լաւ չէր ըլլար արդեօք որ այնպէս մը ընէինք, որ տղայք դպրոցը նախակրթական լաւ դասախրատութիւն մը ստանան և դպրոցէն ելլելով արուեստ մը սորվին։ Իսկ բարձրագոյն կրթութիւնը պահելով անոնց, որք ընտանեկան լաւ վիճակ մը ունին, կամ թէ մեծ մտաւոր կարողութիւն ցոյց կուտան. իրաւ է խըստութիւն չը դնելը աւելի ազէկ է, բայց հարկը կը տրիպէ։ Կ. Պոլսոյ մէջ արուեստ մը կայ որ ամբողջ հայոց ձեռքն է, այդ է ոսկերչութիւնը։ Եւ հարիւրաւոր հայեր այդ արուեստով կապրին։ Ցոյց մը դեռ փոքրի ոսկերչի մը քով կը մտնէ և երբ 18—20 տարեկան կըլլայ, այդ տղան ինքն իր գլխուն ազատ տէր կըլլայ։ Երանի իրեն։— Այսօր բոլոր հայ ոսկերիչները քիչ չատ կալուածատէր են, վիճակին ազէկ, ոչ մէկուն կարօտ չենս։—Հիմա հարցնենք, անոնք ազէկ են, թէ խել մը զժբաղդ երիտասարդները։—Բայց որովհետև ամէն բանի մէջ պակաս պիտի գործենք, այս ոսկերիչներն ալ ընդհանրապէս չատ անխնամ նախնական կրթութիւն մը առած են։ Մեր ջանքը պէտք է ըլլայ նախնական կրթութիւնը և արուեստը իրարու հետ միացնել։ Կոչկակարութիւնը, գրեթէ բոլորովին յունաց ձեռքն է. բայց թիւրաւոր հայեր կ. Պոլիս ուռանց կոչկի չեն պրծրտեր. ինչու՞ ջանք մը չը-ենենք որ զէթ հայոց կոչկակարները հայ ըլլան, ասով չատ բան վաստակած կըլլանք։—Երբ այժմ տաք. Փեշտմալճեան կը քարոզէ արուեստից կարեորութիւն ընծայել, կ. Պոլսոյ հայերը լաւ կը-նեն եթէ մտիկ ընեն անոր խօսքերուն, մանաւանդ որ պ. Տօքթէօրը նախորդ սերունդին վերաբերելով, մին է անոնցմէ որ կրթեցին ներկայ սերունդը։ Անշուշտ նախորդ սերունդը կը ցաւի որ պալ գործած է, և առանց ուղղելու արդի սերնդեան դժբախտութիւնը պատրաստած է. փորձառութիւնը ցոյց կուտայ իրենց թէ որշափ սխալ ըրած են մեզ, արդի սերունդին, անկ է նախորդին փորձառութիւնէն օգուտ քաղել և անոր խրատներուն անսալ։

Իսկ աղջկանց կրթութեան համար չատ աւելի յուսի ընթացքի մէջ ենք։ Իշխանուհիի մը կըրթութիւնը կուտանք անխոհեր ամէն աղջկանց, սակայն ուր են իշխանները։—Եւ այդ աղջիկները կելլեն զպրոցէն, մեծ գաղափարներով որոնած, սակայն աղքատ են, չեն կարող ապրել, չեն կարող կարգուիլ, զի տղայքներն ալ իրանց պէս են։ Կ. Պոլիս թաղեր կան, ուր ամբողջ սերունդ մը ամուրի մնացած է։ Եւ աղջիկները փոխանակ մայր ըլլալու, կըլլան պառաւ աղջիկներ։—Որշափ պիտի բարեփոխուի վիճակին, եթէ քիչ մը ուրիշ կերպ կրթուէին։ Այս մի աղջիկ տեսայ, որ կրնայ այդ տեսակին օրինակը համարուիլ։ Աղքատի աղջիկ մէր, տգեղ. բանական ուսում սորվեցաւ, մասնաւորապէս ֆրանսերէն լեզուին չատ աշխատած, անթիւ բոմանները կարդացած էր, բայց պէտք էր ապրել։ Այսօր տան մը մէջ վարժուհի կըլլայ. օր մը մայրը կուգայ աղջիկը տեսնելու, և անոյ աղջիկը ապուշ ապուշ կը նայի, չը ճանչնալ կը ձեւացնէ և վերջապէս տունն դուրս վանդել կուտայ մայրը։ Ինչու՞. վասն զի վարժուհին այնպէս մը հաւատացուցեր է, որ ինքն ֆրանսայի է, մօրը դալը աղջիկը անօթութեան պիտի դատապարտէր, հայ ըլլալը յայտնելով։ Ահա կըրթութիւն մը, որով աղջիկ մը ապրելու համար իր մայրը, իր ազգը կը պարտաւորի ուրանալ։ Որշափ սիրտ վիրաւորող տեսարաններու վկայ եղած ենք։ Ժամանակը չէ արդեօք որ քիչ մը ալ ասոր վրայ մտածենք։ Ակնոց ենք. պարգևաբաշխութեան հանդէսներուն զայս ցոյց տուին։— Այս հանդէսներէն մէկուն մէջն էր որ ձեր հայրենակիցը, պ. Նիկողոսեան, նոր կերպով զբաղեցաւ մը լսեցուց, ինչ որ գրաւոր կը քարոզէր, հազարաւոր հայերու ներկայութիւնը կոչել։ Ժողովուրդին մէջ լաւ արձագանք գտած է այդ անպատրաստից բանախօսութիւնը և կարծենք աւելորդ չը լինիր համառօտ գաղափար մը տալ այդ բանախօսութեան վրայ, թէպէտ քիչ մը ուշ, բայց աւելի լաւ է, զի ամէն բան իր տեղին ընելու է, և այս մէջտեղն կրթական խնդրով զբաղելու պէտք ունինք։

Պարգեւաբաշխութեան հանդէսը տեղի ունեցաւ Քէոմ—քարու, այն թաղին մէջ, ուր ամենէն չատ հայ կայ, ուր պատրիարքարանն է, ուր արուեստաւորք և առեւտուր ընողք ամենէն բազմաթիւ են։ Հինգ միացեալ—վարժարանաց հանդէսն էր։ Պատրիարք սրբազանը կը նախագահէր. հասարակաց լուսաւորութեան նախարարը իր կողմէն ներկայացուցիչ խրկած էր, ինքն պաշտօնեից խորհրդին ներկայ գտնուելու տարեալ ըլլալով։ (բայց մենք կարծենք թէ այդ նախարարը բաւականին աւելի պէնդ երես ունենալու էր հայոց հանդիսի մը ներկայ գտնուելու, և պատրիարքին մօտ նստելու համար)։ Լսուեցաւ թէ հինգ հազարէն աւելի հայք ներկայ են եղած։ Պ. Նիկողոսեան բեմը կելլէ։ Ահա ըսածներուն համառօտութիւնը։

«Կենացս մէջ չատ քիչ անգամ պատեհ առիթ եմ ունեցեր, որ ինձ համար ըլլար այնքան ուրախալի, որքան այս ըսելս, զի երբեք այսքան համարձակներու հետ զէմ առ զէմ չեմ գտնուած։ Ձեզ համար ալ անչուշտ առաջին անգամն է որ առիթ կունենաք տեսնել մի ռուսական, որ վեց ամիս է վեր ձեր մէջ գտնուած ըլլալով, ձեր գործունէութեանց վերաբերութեամբ այսքան դառն դատողութիւններ ըրած է։ Ձեզմէ չատերը որ հետամուտ են լրագրաց, չատ անգամ կրսեն «Թիւրու, Նիկողոսեան այսպէս կը խօսի մեզ հետ. ինչու՞ այսքան խիստ կերպով կը յարձակի մեր վրայ»։ Այս մասին կուզամ ձեզ մի համառօտ բացատրութիւն տալ։

Մեր մէջ առաջին անգամը չէ որ քննադատական և կշտամբիչ լեզուով կը խօսուի. եթէ կը լսէք մի այդպիսի լեզու, նա բնաւ պատահական չէ և ոչ բացառական. նա այն ուղղութեան ամենաթոյլ և ամենանսեմ արձագանքն է, որոյ հետեւեր են և կը հետեւին Նազարեանցներու, Նալբանդեանցներու և Արծրունիներու։ Այդ ուղղութիւն կարծեմ ձեզ ես անծանօթ չէ, երբ ձեր մէջ կայ մի մարդ որ քսան տարիէ ի վեր կը հետեւի նոյն ուղղութեան և այնչափ ինքնուիրութեամբ, որ եթէ այդ մարդու խոստովանանքը տարցնէ թէ որ գիշերը նա աւելի հանգիստ անցուցած է, անշուշտ կիմանայ, որ լոկ այն ժամանակ, երբ նախընթաց օրը նա ամենաբուռն յարձակումներ ըրած է «մեծ աղաներու» դէմ (խօսքը Մանդու�Լ.Ֆքելարի խմբագրին վրայ է)։ Նոյնը կը վստահանամ ես վկայել, տիկնայք և պարոնայք, նմանապէս և մի յարգի բարեկամս համար, որ աւելի գոհ կը լինի երբ իր թոքը թափած ըլլայ իր լրագրի մէջ թիֆլիսցւոց վրայ նոցա անտարբերութեան համար ազգային գործոց մէջ, քան թէ այն ժամանակ, երբ նա հարիւր ոսկի աւելի եկամուտ ստացած ըլլայ իր մեծագիր կայքերէն (խնդալ և հեռաբերբերական հարցումներ իրարու)։ խօսքս, տիկնայք ու պարոններ, պ. Գրիգոր Արծրունիի և «Մշակ» լրագրի վրայ է (գոհունակութեան արտայայտութիւն։

Ուրեմն կը տեսնէք, որ իրարմէ այսքան հեռաւոր կեդրոններ ազգային ասպարիզի մէջ գործող անձինք առանց միրար ճանչնալու, տեսնելու և նաև լսելու կարտայայտեն նոյն ուղղութիւն, նոյն քննադատական յարաբերութիւնը դէպի իրենց ազգայիները և նոցա գործունէութիւնը։ Ո՞րտեղէն առաջ կուգայ այս հետաքրքիր երեւոյթ և ինչպէս բացատրել զայն։ Այդ երեւոյթը, պարոններ, հայոց ինքնաճանաչութեան արտայայտութիւն է (հաւանութեան ցոյցեր)։ Այդ երեւոյթը կը նշմարուի ոչ միայն հայ մշակեալ դասուն մէջ, այլ ես գտնելի հայուն անգամ, զոր եթէ խօսեցնես ազգային գործերու վրայ, նա միշտ կրսէ «աղա, մեր տունը անմիաբանութիւնը քանդեց» և այնու Այստեղ առնեաբանը կը սկսի հերքել հայոց անմիաբանական հոգւոյն վրայ եղած կարծիքները, յառաջ բերելով չատ վաստեր, մանաւանդ հայկական հարցի ծագման օրէն ի վեր։»

Այո, կրսէ նա վերջը, մենք անմիաբան ենք իրարու մէջ ինչպէս որ այդ չատ բնական է իւրաքանչիւր ազգերու մէջ և ուր կան գաղափարց մաքառում, բայց այդ անմիաբանութիւն չէ, այլ կեանք և յառաջադիմութիւն։—(Հաճոյութեան ցոյցեր)։ Թէ մենք անմիաբան չենք, թող ձեզ ապացոյց լինի այն, որ երբ օտար մը վիրաւորէ մեր ազգային արժանապատուութիւնը, այդ ժամանակ իւրաքանչիւր հայ պարտաւորութիւն կը համարի իր ձեռքէն եկածը ընել ի պաշտպանութիւն իր ազգային պատուոյ։—(Գոհունակութեան արտայայտութիւններ)։

Կը հերքէ ես ոմանց այն առարկութիւն թէ քննադատական ուղղութիւն վնասեցուցիչ կերպով կազդէ գործիչներու վրայ։ Մինչէ հայոց ազգի համար՞ այս առարկութիւն, կը հարցնէ, չեմ կարծեր, վասն զի եթէ Լէնկ-թենմուրներու, Զինգիսխաններու սուրը՝ և արեան գետերը կարող չեղան հայը վհատեցնել, ինչպէս կարելի է որ ազգի բարեկամ հարցաքննողներ զրիչը վհատեցնէ (հաւանութեան նշաններ)։

Վերջը առնեաբանը կանգնի իր սիրած դասի, արուեստաց և գործնական ուղղութեան պաշտպանութեան, որու վրայ բաւական ընդարձակօրէն կը խօսի օրինակներ բերելով հայոց անցեալ և ներկայ կեանքէն։ Այստեղ հետաքրքրութեան արժանի էին հետեւեալ խօսքերը. «Բուն հայկական կեանքի մէջ հայ կնոջ անտարբերութիւնը և աշխատասիրութիւնը այնչափ նուիրագործուած աւանդութիւն կը համարուի, որ հայ կինը իր զաւակները անիծեալ ժամանակ մինչև կրսէ հայոց կոչտացած ձեռքերուն երախները քու աչքերը բռնէն։ Իսկ քանի կոչտ ձեռքեր կարելի է գտնել այս բազմաթիւ հանդիսական գեղեցկի սեռի մէջ, չեմ կարծեր որ չատ (հաւանութեան խնդումներ)։

Խօսելով վերջը այն պարտաւորութեան վրայ, զոր ունեն թիւրքիայի հայերը թիւրքիայէն, Ռուսիոյ հայերը Ռուսիոյ մէջտեղ հաւատարիմ և երախտագէտ մնալու, վերջացուց խօսքերը ըսելով «եթէ մեռաւոր ազգային մէջ տեղափոխվենք աւետեաց երկիրը (պարզելով ձեռքը դէպի Ասիոյ կողմը), այսչափ տարի մեր ստացած ուսումովը մենք կարող չը պիտի ըլլանք գործնականապէս և արուեստագիտաբար այնչափ շահուիլ, որ մեր արժանաւոր մարդկանց համար, որոց մինը այժմ մեր մէջն է (ակնարկութիւն Ներսէսին) արձաններ կանգնեցնելու. համար մենք պիտի գիմնք օտարներն, ինքներնիս անկարող ըլլալով մեր ստացած ուսումով, որ այդ օտարները գծագրեն, կոփեն, ձուլեն և կանգնեն այդ արձանները. այն ժամանակ հարմ ըլլայ այդ ուսումը (բուռն և երկար ծափահարութիւնք)։

Այս խօսքերէն վերջը խօսեցաւ Պատրիարքը, յետոյ լուսաւորութեան նախարարի փոխանորդ Թէմիսթոքլէս Ֆրանսերէն խօսեցաւ, հիանալով հայոց ազգի միութեան և յառաջադիմութեան վրայ։—Պատրիարքը եպիսկոպոսներով, վարդապետներով և ազգային երեւելեաց հետ միասին գնաց պատրիարքարան, ուր քիչ մը վերջը գնաց պ. Նիկողոսեան, յետ պատասխանելու ամբոխի շնորհակալեացը, մեզ բարով ըսելու։ Պատրիարքը գնա քով առնելով շնորհակալութիւն կը յայտնէ և կը ներկայացնէ գնա թիւրքոյ պաշտօնեային։ Պաշտօնեայն կը յայտնէ թէ, ինքն թէպէտ հայերէն լեզուն չը հասկայ, բայց ատենառաջին խօսած ժամանակ ժողովրդին յուզմունքը և գոհունակութեան ցոյցերն ակներև կրնէին թէ ատենառաջը խօսելու և տպաւորութիւն ընելու մեծ ձիրքեր ունի։—

Քիչ մը խօսակցութիւնէ վերջը մեկնեցաւ պ. Նիկողոսեան. իրեն ընկերացան բազմաթիւ երիտասարդաց խումբ մը, մասնաւորապէս գաւառացիներէ։

Պ. Նիկողոսեան տակաւին ի մեզ է. սակայն չենք գիտեր ինչու ձեռքի տակէ այսքան դաւադրութիւններ կըլլան իրեն դէմ։ Օր մը հոս կառավարութեան կը մատնեն, միւս օր իբր վտանգաւոր անձ մը կուգեն ցոյց տալ։ Պ. Նիկողոսեան իր հակառակորդաց դէմ յայտնի կը մարտնչի, հրապարակաւ կը խօսի, կը գրէ, իսկ նոքա ձեռքի տակէ, խարդախ կերպով կը գործեն, և այս ընթացքը բաւական է ցոյց տալու թէ ինչ տեսակ արարածներ են։ Հակառակորդ ըլլալը վնաս չունի, բայց ակներև մարտնչողին դէմ ակներև կռուելու է։ Այս օրերս փոքրիկ թերթը հաղորդեց, և ուրիշ թերթեր ալ արտատպեցին թէ Էջմիածնէն Փիլիպպոս եպիսկոպոս Նաճառեանց հոս գրած է, թէ Նիկողոսեան վտանգաւոր անձ մ'է և զգուշանալու է։ Այս այն Փիլիպպոս եպիսկոպոսն է որ պատերազմի տարին այնքան շնորհակալութիւններ և գովեստներ կը մատուցանէր Նիկողոսեանի։— Սակայն այս եպիսկոպոսը, որ ազգասէր անձ մ'է, բայց քիչ մը դէպի տալու, ով գիտէ ինչ տեսակ խաբեբայութեանց զոհ եղեր է։ Պ. Նիկողոսեանի հոս հրատարակած մէկ նամակի կը տեսնուի որ տրամադիր է ուղղակի դատ բանալ իր դէմ այսպիսի զրպարտութիւններ ընողներուն։—Զրպարտիչք բաւական դժուար կացութեան մը մէջ պիտի գտնուին։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի. «Правит. Вѣстн.» հերքում է „Порядокъ“ լրագրի հաղորդութիւնը, որ իբր թէ Ս. Պետերբուրգի գլխաւոր պոլիցէյմէյստեր կոզլով մի այլ նշանակութիւն է ստանում „Рус. Инвалидъ“ հաղորդում է որ պատերազմական մինիստրութեան մէջ գիտաւորութիւն չը կայ վերցնել օֆիցէրների համար շինել դրելու իրաւունք։ „Порядокъ“ հաղորդում է։ Երէկ կայացաւ առաջին նիստ խմբագիրների վրա հարկերի վերանորոգութեան պարագայ յանձնաժողովի, կոմս Իգնատիեվի նախագահութեամբ։ Հերքվում է այն լուրը, որ իբր թէ գիտաւորութիւն կայ ծխախոտային կոմիսիայում հարկ դնել ծխախոտի պանսիոնների վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի։ Փոստական բանկի 5% առտնակը առաջին շաբաթի արժէք 96 ր. 87 կ., երկրորդ 93 ր. 62 կ., երրորդ 94 ր. 25 կ., չորրորդ 93 ր. 62½ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէք 226 ր., երկրորդ 220 ր. 5 կ., արտաքին առաջին փոխառութեան տոմսակը արժէք 91 ր. 12½ կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 25 կ., սակի 7 ր. 64 կ։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէք 25,94 պէնս, Ամստերդամի վրա 131,25 պէնս։ Ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէք 221 մարկ 62 պֆ., Փարիզի վրա արժէք 274 ֆրանկ, 75 սանտիմ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ